

“Երիտասարդական ակումբների դաշնություն”

երիտասարդական հասարակական կազմակերպության

նախագահության կողմից



“ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ՝ ԿԱՍԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ” ԾՐԱԳԻՐ

| | |
|---|--|
| 1 | <p>Ծրագրի նպատակը</p> <p>Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի ու Վայոց ձորի մարզերում պատանիների ու երիտասարդների ազատ ժամանցը արդյունավետ կազմակերպելու համար երիտասարդական ակումբների ու խմբակների ստեղծում ու դրանց գործունեության ապահովում: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու այդ բնակավայրերում գործող երիտասարդական ակումբներին, կենտրոններին ու խմբակներին, արտասահմանցի ու տեղացի երիտասարդ կանավորների ուժերով կազմակերպվելու են բազմաթիվ ուսուցողական ծրագրեր, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ:</p> |
| 2 | <p>Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը</p> <p>Օգտվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի պարտադիր այլ վճարների գծով արտոնություններից:</p> |
| 3 | <p>Բարեգործը</p> <p>Եվրամիություն, Կրթության և մշակույթի գործակալություն, UNIT P6, Avenue du Bourget 1, Brussels 1140, Բելգիա: էլ.փոստ՝ eacea-p6@ec.europa.eu</p> |
| 4 | <p>Ծրագիրը կատարողը</p> <p>“Երիտասարդական ակումբների դաշնություն” երիտ. ՀԿ, Մաշտոցի պող. 4-1/1, Երևան 0015, ՀՎՀՀ 03308579</p> |
| 5 | <p>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</p> <p>ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի ու Արագածոտնի մարզեր: Բնագավառը՝ մշակութային</p> |

| | | |
|-----------|---|--|
| | | <p>անհրաժեշտ ծախսեր:</p> <p>- Տեղական միջոցառումների, ձեռքերված ու մարզային երիտասարդական խմբակների փոխանցված նյութերով ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, աշխատակազմի վարձատրություն – 2014թ դեկտեմբեր – 2015թ հունվար ամիսներ – 3.000.000 (երեք միլիոն) դրամ:</p> |
| <p>10</p> | <p>Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p> | <p>- Հարողակցություն ծրագրի շրջանակներում, այցելություններ, հանդիպումներ մարզերում ու հյուրասիրության կազմակերպում – 2.000.000 (երկու միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում,</u></p> <p>- Կանավորների ավիատոմսերի ձեռքբերում, նրանց անունը և գիշերակաց – 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում,</u></p> <p>- Կազմակերպությունների ներկայացուցիչների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում, հյուրանոցային ծախսեր, մասնակիցների և դասընթացավարների գիշերակաց և սնունդ, գրենական պիտույքների ու ուսուցողական նյութերի ձեռքբերում, 5.500.000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում,</u></p> <p>- 20 երիտասարդական կենտրոնի համար նյութերի ձեռքբերում – 10.000.000 (տասը միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում,</u></p> <p>- Տրանսպորտային միջոցի ձեռքբերում և ներմուծում՝ ներառյալ տեղափոխման ու այլ անհրաժեշտ ծախսերը – 7000 ԱՄՆ դոլարին համարժեք << դրամ:</p> <p>Տրանսպորտային միջոցի տվյալներն են՝ Տարի – 2011 Մակնիշ – KIA SORENTO, 2,4L Գույն – BURGUNDY VIN համար – 5XYKT3A14BG024081</p> <p><u>Գործարքի շրջանակներում ակնկալվում է մաքսատուրքից, այլ հարկերից ու պարտադիր վճարներից ազատում:</u></p> <p>- Տրանսպորտային միջոցի վերանորոգում ծառայություն – 1130000 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար) << դրամ:</p> <p><u>Գործարքի շրջանակներում ակնկալվում է Ավելացված արժեքի հարկից ազատում:</u></p> <p>- Տեղական միջոցառումների, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, աշխատակազմի վարձատրություն – 3.000.000 (երեք միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում:</u></p> |



| | | |
|----|--|--|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը՝ աշխատակազմի վարձատրությունը և գրասենյակի կոմունալ ծախսերը կազմում են ամբողջ բյուջեի 5%-ը՝ 1.350.000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել մարզերում գործող երիտասարդական կազմակերպությունների, իրավաբանական անձ չհանդիսացող ակումբների ու կենտրոնների հետ: Մասնավորապես, “Սոցիալական ու երիտասարդական աշխատողներ” ՀԿ, “Երիտասարդական հանրապետություն” ՀԿ, “Կրթական ու մշակութային կամուրջներ” ՀԿ, “Հայկական Փի Ար ասոցիացիա” գիտատեղեկատվական ՀԿ, “Եղվարդ” բնապահպանական ՀԿ, “Համաշխարհային հայկական երիտասարդական ուսույն” միջազգային ՀԿ, “Սպիտակ” երիտասարդական ակումբ, “Քոլտոն” ՀԿ, “Աշտարակի երիտասարդական կենտրոն”, “Երիտասարդական այլք” ՀԿ, Շիրակի թեմի երիտասարդական սոցիալ-մշակութային կենտրոն, “Սևան” երիտասարդական ակումբ, Գյումրիի “Բարեկամություն” ՀԿ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման համար ստեղծվելու է համատեղ հանձնախումբ, որում նախատեսվում է ընդգրկել իրականացնող և գործընկեր կազմակերպությունների մեկական ներկայացուցիչ: Ծրագրի ավարտի մասին ահանանված կարգով կներկայացվի հաշվերկազմում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

